AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

07 օգոստոսի 2019 թվականի N ՑՊ-031-08/19

Ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2019 թվականի օգոստոսի 01-ի հայտը 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.5% արժեկտրոնային տոկոսադրույքով, 120,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2019 թվականի օգոստոսի 06-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.5% արժեկտրոնային տոկոսադրույքով, 120,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMARBKB2KER7 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ARBKB2K հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 12-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ 02220914